

սկսեալ 34° զրոյէն վար, երբ սառը շուգի կ'արձակէ, մինչև 230° զրոյէն վեր, այսինքն 28 հզկ. ճնշումի տակ, նա կը չափէ հեղուկ ջուրին տեսական ջերմութիւնը՝ զրոյէն սկսեալ մինչև 200 աստիճան, կ'որոշէ վերջապէս կարևոր եղած բոլորական ջերմութիւնը՝ ջուրը շոգիի վերածելու համար զանազան ճնշումներու տակ, Հասած էր նա իր հետազոտութեանց գործնական վախճանին, Աննաման ճշդութեամբ մը և բեղուն ինքնուրունութեամբ մը կատարուած փորձեր՝ վերահասու կ'ընէին զճարտարապետներն բոլոր թուական ցուցիչներուն, որոնք անհրաժեշտ կարևորութիւն ունին շոգեշարժ մեքենայից հաշուական գործոյն մէջ՝:

ԴԻԻՄԱ. Ճաք և ճերտղը ակադեմականը.



ՊԱՏՄԱՌԻԹԻԻՆ

ՀՌՈՄԱՅԵՑԻՈՑ

(Շար. տես. 1917 թգմ. էջ 135)



Հռոմէական ժողովուրդը

ՊԱՏՐԻԿԵՐԸ (populus romanus)

բաղկացած էր մի միայն պատրիկներէ. անոնք միայն կը վայելէին քաղաքական, պետական, հասարակական ու առանձնական բոլոր իրաւունքները: Պատրիկը կը սերէր ազնուական տոհմէ մը (gens): Հոռոմ ուրեմն մեզի կը ներկայանայ ազնուապետական կազմակերպ.

պտվեհամբ մը, որ ունէր իր առանձին կրօնքը, աստուածները, զոհերը, կուտուններն ու գերեզմանները: Տոհմը կը պարունակէր միևնոյն ընտանիքին բոլոր ճիւղերը՝ ունենալով հասարակաց նախահայր մը: Տոհմին բոլոր անդամները նոյն անունը կը կրէին՝ և առաջին ճիւղին անդրանիկ որդին էր անոնց քաղաքական և զինուորական պետը, որ կը կոչուէր հայր (paterfamilias), և ըստ միանգամայն իր նախնեաց կրօնքին: Իսկ տոհմին միւս անդամները կ'ըսուէին պատրիկներ: Հայրն ընտանիքի մէջ՝ բացարձակ տէր էր իր կնոջը, որդիներուն և բոլոր անոնց՝ որ խմբուած էին ընտանեկան վառարանին շուրջը: Երեւոյն մահէն վերջը միայն ազատ կ'ըլլար մէկը հայրենական իշխանութենէն, վասն զի նա իրաւունք ունէր չարչարելու և մինչև իսկ վաճառելու իր որդիները. եթէ գնողը զայն ազատէր, վերստին հօր իշխանութեան ներքէ կ'իյնար: Բայց եթէ որդին երեք անգամ վաճառուէր, և երեք անգամ ալ գնողէն ազատ արձակուէր, այն ատեն բոլորովին ազատ կը դառնար:

Պատրիկներու ձեռքը կեդրոնացած էին բոլոր հողերն ու հօտերը: Շատ ազատ մարդիկներ ուզելով դիրքի մը հասնիլ՝ պատրիկ պաշտպանիչներու (patroni) ցանկին մէջ կ'արձանագրուէին և անոնց կրօնքին հովանաւորութեան տակ կը մըտնէին պաշտպանաւոր տիտղոսով: Ասոնք իրարու հանդէպ փոխադարձ պարտքեր ու իրաւունքներ ունէին: Պաշտպանիչը՝ փոխանակ պաշտպանաւորին՝ ատեան կ'ելլէր ջատագով ըլլալու համար անոր գործնութիւն և ստացուածքին, և ասոր փոխարէն՝

1. Խաբը. — Իրիմայի սոյն տողերը զրեւն վերջը շուգեշարժ մեքենաներուն առաջ բերած աշխատութիւնը, խիստ մեծ համաժողովեամբ ընդարձակուած է: Օրինակ մը միայն յիշենք Էլեկտրական լուսոյ վերաբերող ճարտարագործութիւնը, որ Իրիմայի ժամանակ չկար. Բարիլու մէջ միայն 1894 յունուար 1ին՝ 277,000 Էլեկտրական կամթեղներ ի գործածութեան էին, որոնց առ նուազն 80,000 շոգեծիրոյ ոյժ մը կը պահանջէին:

2. Նոյն ընտանիքին պատկանողները՝ կ'որոշուէին իւրենց անունով ու տոհմին մականունով (cognomen), այնպէս որ ամէն արու հռոմայեցի երեք անուն կը կրէր: Այսպէս՝ Պատրիկոս Կոռնելիոս Սիպիոն՝ էր Սիպիոն նեանց ընտանիքէն մէկը, Կոռնելիոս տոհմէն. Գայիոս Յուլիոս Կեսար՝ Կեսարիանց ընտանիքէն մէկն էր՝ Յուլիոս տոհմէն, Իսկ կանայքն ընդհանրապէս կ'որոշուէին հօր տոհմին մէջ անունով (Կոռնելիա, Յուլիա, ևն.):



SANDRO BOTTICELLI. — « LA MADONE DE LA GRENADE »

« ՆՈՒՈՒ ՏԻՐԱՄԱՐԷ »

պաշտպանաւորին պարտքն էր զրամով օգնել պաշտպանչին՝ եթէ սա տուգանքի դատապարտուէր կամ պատերազմի մը մէջ ձերբակալուէր. պարտական էր անոր հետ պատերազմել երթալ և տուրք վճարել՝ եթէ իր աղջիկները կարգէր: Պաշտպանութեան իրաւունքը կ'անցնէր ժառանգութեամբ ընտանիքին տանտիրոջը:

Ընտանիքն իսկական փոքր Պիտութիւն մ'էր՝ կազմուած բազմաթիւ անձերէ. ան



Հռոմայեցոց պարեգօտի ծնը:

իր պետն ունէր, իր կրօնքն և իր մասնաւոր սովորութիւնները:

Տոհմերը՝ խմբուած տասն առ տասը՝ կը ձևացնէին կոչիքաները: Կուրիան՝ աւելի մեծ ընտանիք մ'էր և ունէր իր առանձին քուրմն ու տաճարը: Երեսուն կուրիաներու միութիւնը կը կազմէր տոհմական ժողովը (comitia curiale): Այս ժողովն էր որ ամէն ինչ կ'որոշէր իր քուէով: Իրմէ զատ՝ կը պաշտօնավարէր տոհմերու պետերէն կազմուած խորհրդարան մը, Երեսնայոյր, որու անդամները կը կոչուէին հայրք (patres):

Հռոմէական ժողովուրդէն ՌԱՄԻԿԸ զուրմ՝ ամբողջ մը կար, ուրու թիւն անդադար կ'աճէր: Հռոմի մէջ և մաս չէր կազմեր ո՛չ մէկ ընտանիքի: Այս ամբողջ ձևացած էր փախստականներէ, պարտուածներէ, բախտախնդիրներէ, սպառած ընտանիքներէ, պաշտպանաւորներէ ու ազատագիրներէ: Որովհետեւ հռոմէական պետութեան մէջ քաղաքացիներու գոյութիւնը հաստատուած էր կրօնքի վրայ, ուստի Հռոմի մէջ եղած այս ամբողջը չունենալով իր առանձին կրօնքը, չունէր նաև իրաւունքներ: Ան ուրեմն օտարական կը համարուէր և կը կոչուէր Ռամիկ (plebs). չկարենալով ըլլալ ո՛չ քաղաքացի, ո՛չ ատենակալ, Ռամիկը չէր կրնար պատրկական ընտանիքներու հետ խնամենալ:

Բայց որովհետեւ Ռամիկները բազմաթիւ էին, ոմանք ալ հարուստ, ուստի կրնային բանակին հայթայթել լաւ զինուորներ: Սերուիոս Թազաւորն եղաւ առաջինը՝ որ մտածեց այս ուժն օգտակար ընել: Նոյն ժողովուրդը, պատրիկն ու Ռամիկը 6 դաս և 193 հարիւրեակ բաժնեց: Այս բաժանումը հարստութեան համեմատ եղած էր, որպէս զի տուրքն աւելի կանոնաւոր կերպով բաշխուի ու զինուորական պաշտօններն որոշուին: Զինուորներն առանց ռոնկի էին և իրենց սպառազինութիւնն իրենք պիտի հոգային: Ուստի առաջին դասը, որ ամենէն հարուստ քաղաքացիներէն կը բաղկանար, թէ՛ աւելի հարկ պիտի տար, թէ՛ աւելի զինուոր պիտի հանէր և թէ՛ աղէկ սպառազինուած ըլլալուն՝ ռազմաճակատին մէջ ամենէն յառաջ պիտի նետուէր, իսկ վերջին չքաւոր քաղաքացիներու դասը Ռամիկն էր. արդ, բանակը կը քուէարկէր խաղաղութիւնն ու պատերազմը: Նոյն կը ձևացնէր առանձին ժողով մը՝ կոչուած հսփիշաւարներու ժողով (comitia centuriate), յանուն զայն կազմող հարիւրեակներու: Այսպէս Ռամիկը մէկ հարուածով ստացաւ բանակին մէջ պատերազմելու պարտքն ու քուէին իրաւունքը, բայց զրուկուած ֆաւորի ընտրելի ըլլալու իրաւունք:

բէն: Կրօնական հին իրաւունքի զօրութեամբ, որ միշտ ուժի մէջ էր, պատրիկները միայն կրնային պաշտօնի հասնել:

Թէէն Հոռմի մէջ ազնուական և ռամիկ դասեր մնացին, և առաջինը շատ արտօնութիւններ պահեց, բայց հարուստ ուսմիկն ալ պատրիկի համագօր լինելով, հարստութեան ազնուականութիւնը քիչ քիչ տոհմային ազնուականութեան տեղն անցաւ: Այս տեսակէտով՝ Սերուիտի օրէնքը՝ Սողոնի օրէնքներուն կը նմանէր:

Հոռմի մէջ՝ այս դասերէն զատ՝ կար նաև ստրուկներու դասը, որոնք մարդ չէին նկատուեր, այլ առարկայ մը՝ զոր տէրը կրնար իր ցամառային համեմատ գործածել: Ստրուկ էր մէկը՝ եթէ պատերազմի ժամանակ գերի բռնուէր, եթէ պարտքը չկրնար հատուցանել, եթէ դատապարտութեան մ'ենթարկուէր: Ստրուկը կարող էր իր ազատութիւնը ձեռք բերել, և ազատագիրներու կարգն անցնել:

ԱՍՏԱՆԱՐՈՒԹԻՒՆ

Հոռմական պետութեան գլուխն էր Թագաւորը, որ ժառանգական չէր, այլ ընտրական: Մերակոյտը կ'առաջարկէր թեկնածու մը և պատրիկներու ընդհանուր ժողովը քուէով կ'ընտրէր զայն: յետոյ աստուածներուն կամքը կը հարցնէին: Ասոր համար նոր ընտիր արքան կ'առաջնորդուէր կապիտոլինի կատարն ու կը բազմէր քարէ ասթոի մը վրայ, դէմքը դէպ ի հարաւ դարձուցած, Հաւահայ մը ճակատը սրբազան քողով փաթթած՝ աղօթք մը կ'արտասանէր, և ձեռքը Թագաւորին գլխուն վրայ տարածած՝ կը սպասէր յարմար նշանին, որ էր փայլակ մը կամ թռչուններու մասնաւոր թռիչք մը:

Թագաւորն էր միանգամայն Հոռմի քրմականպետը, գերագոյն դատաւորն ու բանակին սպարապետը: Պատերազմի ժամանակ և քաղաքէն դուրս՝ բացարձակ իշխանութիւն կը վարէր, իսկ խաղաղութեան ատեն՝ Մերակոյտի ու ժողովրդեան խորհրդով կը գործէր:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(510-30 Ք. ա.)

ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՀՌՈՄ

Հասարակապետութիւնը. — Թագաւորական դաս, — Արիւսի պատերազմը. — Պորսենն Հոռմի դէմ. — Լատին Հոռմի դէմ. — Առաջին պայքար երկու զասակարգերուն մէջ. — Ագարակային առաջին օրէնքը. — Պտերիկեան օրէնք. — Առաջին տասնապետը. — Երկրորդ տասնապետը. — Տասնապետաց անկումը. — Կանուլէեան օրէնք. — Լեկինեան օրէնքներ. — Երկու զասակարգերուն կատարեալ հաւասարութիւն:

Երբ 510ին Թագաւորներն արտաքսուեցան Հոռմէն, հոռմական ժողովուրդը գերագոյն իշխանութիւնն իրեն սեպհականեց: Արդ, ժողովուրդը մի միայն պատրիկներէն բաղկացած ըլլալով, յեղափոխութիւնն ի շահ իրենց կատարուած էր: Որովհետև ամէն անգամ Թագաւորները ռամիկը սիրաշահելու միտումը ցոյց տուած էին, անոնց տեղը դրուեցան երկու հիպատոսներ, որոնք



Հոռմուհույ մագ սամարեալու ձևը:



Հոռմուհույ զգեստ:

միշտ պատրկական ընտանիքներէ պիտի ընտրուէին: Կառավարութիւնը պատրկվէն երէն միայն կազմուած Ինքնակոյտին ձեռքն տէր: Հիւպատոսներն ու Դերակոյտն ուրիշ բան չէին՝ բայց եթէ վարչութեան զործիքները, ժողովրդեան՝ այսինքն պատրկաներուն կամը զործադրող: Ասոր համար Հասարակապետութեան եօթն դարու միջոց՝ Հոռմ մնաց զեռ նախնի ոռով քաղաք մը: Նա աշխարհակալեց միջերկրական աշխարհն և շահագործեց զայն: Այն ատեն նա փայլեցաւ յաղթութիւնը տուող առաքիւթիւններով. կարգապահութեամբ, տուկունութեամբ, հայրենասիրութեամբ, Բայց Հոռմական Հասարակապետութիւնը չնմանեցաւ բնաւ մեր ռամկավարական հասարակապետութեանց, և պատերազմներու մէջ յաղթական հանդիսացող ժողովուրդը չտեսաւ երբէք որ այդ յաղթութիւններն իր կեանքի պայմանները բարոյքեն, վասն զի Հասարակապետութեան կառավարութիւնը կը գտնուէր ազնուապետութեան մը ձեռքը՝ որ Հոռմի տէր ըլլալով՝ աշխարհն իրեն օգտին միայն կը ծառայեցը: Նէր: Երբ ռամկավարութիւնն իր բաժինը պահանջեց՝ ծագեցաւ քաղաքական պատերազմներ, որոնց միջոց Հասարակապետութիւնը մթագնեցաւ: Առաջին երկու հիւպատոսներն եղան Բրտառու և Տարկու: Երես կողմատիւս:


Նորահաստատ Հասարակապետութիւնը առաջին անգամ իր կայն մեծամեծ վտանգներու ենթարկուեցաւ:

Ներսէն՝ Թագաւորականները, դուրսէն՝ արտաքին թշնամիները ներքին երկպառակութիւններէ օգուտ քաղելով՝ ոտքի ելան Հոռմի զօրութիւնը կործանելու համար: Տարկուինիոս Գոռողը՝ արքունի աստացումքն ետ պահանջելու համար՝ դեսպաններ ուղարկեց ի Հոռմ, որոնք սկսան նաև ձեռքի տակէ շատ մ'երիտասարդ ազնուականներ իրենց կողմն որաւ, որպէս զի Թագաւորութիւնը վերահաստատուն: Գիշեր մը դաւն երևան ելաւ, ու Բրտառուին հրա-

մանով՝ դաւանանները՝ որոնց մէջ կային նաև հիւպատոսին երկու որդիքը՝ մահուան դատապարտուեցան: Այս դէպքն այնչափ զրգոեց Հոռմայեցւոց ատելութիւնը նոյն իսկ Տարկուինիոսի անուան դէմ, որ այնուհետև չուզեցին այս զգուշի անունն ունեցող մարդու մը քաղաքին մէջ մնալ, և Տարկուինիոս կողաւորնոս ստիպուեցաւ հրաժարիլ ու Հոռմէն հեռանալ:

Շարք.

Հ. Ս. Տէր-Մոսկովսկի



ԵՒԿԱԼՈՒՍԻՆ (Lune rousse)

Luna ruginosa — Լուսին Ժանգոտաճ
Borsa rugosa — Քսակ խորշմած

... > < ...

ԻՍԱԼԱԿԱՆ այս յանգաւոր առածն՝ լաւ կը բացատրէ գիւղացիներուն մէջ տիրող երկիւղը, նկատմամբ այն երեւոյթին որ կը պատահի Ապրիլ ամսոյ ամբողջ ընթացքին մէջ ըստ հին տումարին:

Գիւղացիները և պարտիզպանները կ'ըսեն թէ Լուսինը կարմրողակ երևոյթ կ'առնու երբ ծնաւ նի Ապրիլի մէջ (ըստ նոր տումարի), և ի վերջ Ապրիլի կամ Մայիսի սկիզբն կը լրանայ, կամ, ինչպէս կը բացատրեն ոմանք, Ձատկէն վերջը ծնած Լուսինը կը կոչուի Դէկ Լուսին:

Եւ ահա այս տարի, նոր տումարի համար, 21 Ապրիլի յետ Ձատկի՝ Լուսին ծնունդն է և 7 Մայիսի ալ լրումն, որով այս տարի ալ Դէկուրակ Լուսին պիտի պատահի: Կիրակոսի գիւղացիները և այգեպանները մեծ կարեւորութիւն կու տան այս երևոյթին, մինչդեռ արևելքի ժողովուրդը չի կալուսնի ուրիշ գաղափար ունի՝ զոր լաւ կը բացատրէ կեսուրին և հարսին հետեւեալ խօսակցութիւնը.

Կեսուր. — Աչէ՛, աչէ՛, Լուսինը
Բռնեցելիւ է,
Սիրուն Գիւտսը՝
Ձարբաբիւ է:
Հարս. — Լուսինը արուն
Է՛, քերբանցելիւ՝:
Կեսուր. — Ընց կու ընի ամէն
Ձատիկ Լուսնական:

Հոս յանդիմանը չնշանակեր Լուսին խաւալումը, վասն զի ամէն Ձատկին խաւարում չպա-